

ՀԱՅԵԼԻՒՄԻՉ

Ամէն անգամ որ կը ցոլան
Հայլիին մէջ աչքերս իրար,
Ես անծանօթ իմ փոփոխման
Ետ կը սարտնուամ սարսափահար:

Ունէ՛ր ես այսքան բարդուած՝
Ճակտիս վըրան՝ թուխ ամրոպներ.
Ինչո՞ւ սըրտիս տըրփին յանկարծ
Կ'եղանակէ մոռցուած երգեր:

Աղօտ յուշեր միշտ կը փնտռեմ
Գարուններէն իմ մանկութեան,
Ու կը խաբուիմ թէ միշտ նոյնն եմ
Մինչ կը փոխուիմ ամէն վայրկեան:

Կարծես երբեք երկու կ'ըլլամ
Ես ինքս երազ և գոյութիւն.
Կը խորանամ, կը նոյնանամ.
Կեանքն է կեանքին լոկ կրկնութիւն:

Կու լամ որ կեանքն այսպէս կ'անցնի
Եւ կը համրեմ գալիք օրերն.
Ի՞նչ խորհուրդ է այնքան գաղտնի
Որ թէ կ'ուզեմ, թէ չեմ ուզեր:

Հարցուցի շատ անցորդներու,
Լերանց անշարժ, ծովերու կոծ,
Բայց չունէին անոնք լեզու
Հորիզոններ բանալու գոց:

Կանգնած եմ արդ ես ինծի դէմ
Գորշ ալիքներ դէմքիս վըրայ.
Հազիւ երբեք զիս կը յիշեմ
Եւ ուղիներն ուսկից անցայ:

Ոչ հետք ունիմ, ոչ պատմութիւն,
Կարծես թէ ծոփն եմ ակօսած.
Կուրծքըս տըլած ալիքներուն
Շուտ անցնելու անդին դիմաց:

Մէկն հեռուէն զիս կը կանչէ
Սըրտիս զարկին հետ մըտերիմ.
Արդէն վաղուց ինձ ծանօթ է
Խանձարուքէս մինչեւ շիրիմ:

1933, Բարիկ Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԵՕԹԸ ԳՈՅՆԵՐԸ

Ի սկզբանէ ոչ երկինք կար, ոչ ալ լոյս,
Խաւարին մէջ կը գալարուէր մութն անյոյս,
Ծոփն էր աղկաղկ հառաչանքոփն իր անհուն,
Եւ ցամաքն ալ չունէր ոչ ձեւ, ոչ ալ գոյն:

Ոյժ մը սակայն, որ միշտ մընաց անծանօթ,
Անհուններէն կ'երկարէր վար ցուք մ'աղօտ,
Որ շեղբի պէս կը հատանէր տիեզերքն
Ու կը գոցուէր, դարձեալ խաւար, դարձեալ մէգ:

Բայց մինչեւ երբ պիտի տիրէր տըխրութիւնն,
Ե՛րբ պիտի գար լոյսի գըլարթ հաշտութիւնն.
Ոյժն անծանօթ զայս խորհեցաւ ինք միայն
Եւ իր խորհուրդն ըսկիզբն եղաւ գոյութեան:

Անթուական օր մը սիրոյ պարանով
Իջեցուց կին մը հըրեղէն թեւերով.
Իր ըսպիտակ կուտութեան մէջը մարմինն
Մերկ ճաճանչն էր մեր օրերու արեւին:

Թափառեցաւ հովտէ հովիտ լեռնէ լեռ
Եւ հոն իջաւ որ Հայաստան պիտ' ըսուէր.
Քարայր մ'ընտրեց իր սուրբ մարմինն գըրգարան,
Որ կոչուեցաւ յետոյ դըրախտը մարդկան:

Յամաքն ամբողջ ոսկի գունտ մ'էր տակաւին
Երբոր մարդիկ ծանօթ չէին դեռ մեղքին.
Բաւ էր որ միտքը կարգ դընէր ու սահման
Կատարեալ էր և ամէն ինչ բընական:

Անչափելի ժամանակով խաւարին
Կինն հըրեղէն ծընաւ առանց երկունքի,
ՀԵՐԹԱԿ-ԿԱՐՄԻՐ-ԿԱՆԱՆԶ-ԿԱՊՈՅՏ ԵՒ ԳԵՂԻՆ
ՄԱՆՈՒՇ-ՄԻՐԱՆ ԵՕԹԸ քոյրեր միասին:

Ոչ ոք գիտէ թէ քանի՛ դար, քանի՛ օր
Անոնք սընան աննիւթ լոյսով մայրածոր:
Քարայրն ամբողջ եօթը բեկբեկ երանգով
Գոյն կը փոխէր ու կը լեցուէր հըրաշքով:

Մայրիկ, ըսաւ, յանկարծ աղջկին ըսպիտակ.
Թո՛ղ ինձ երթամ, տեսնեմ երկնի պարունակ:
Հեզիկ բախեց ոսկի թեւերն աղանի,
Երբ դուրս ելաւ լոյս ծագեցաւ աշխարհի:

Ես ալ կ'ուզեմ, ըսաւ Կապոյտն հրաշալի,
Հեռու, հեռու բարձր թռչիլ աւելի:
Հեզիկ բախեց լազուարթ թեւերն ոսկեման,
Երբ դուրս ելաւ երկինք ու ծով կապուեցան:

Քիչ ժամանակ անցած էր դեռ այդ օրէն
Կանանչն երբոր թըռաւ սիրոյ անձաւէն.
Հեզիկ բախեց զըմրուխտ թեւերն աննըման,
Երբ դուրս ելաւ լեռներ ձորեր կանանչցան:

Ծիրանի՛ քոյր, ըսաւ Մանուշ փոքրիկ,
Մենք ալ երթանք նոր աշխարհներ գեղեցիկ.
Ու բախեցին թեւերն իրենց բերկրութեամբ
Մին արշալոյս և միւսն եղաւ թաւիշ ամպ:

Կարմիրն յայնժամ գերդ միամիտ աղանի
Ծափ կը զարնէր որ Գեղին քոյրը պարէր:

Ս. ԶԵՆՈՆ, 1935

ՍԱՏԱՆԱՆԵՐԸ

Աստուած անիծեց զանոնք բոլորն ալ
Եւ իր լուսաշող ապարանքներէն
Գըլորեց դըժոխք՝ ուր տապալ - թաւալ՝
Վըրէ՛ժ կը գոռան, և սո՛ւր կ'երկարեն:

Հոն կը շնչեն հուր, կ'արտաշնչեն բոց,
Կը ծամեն ոսկոր, ու կ'ըմպեն արիւն.
Ո՛չ աղօթք ունին և ո՛չ օրօրոց,
Այլ անէծք ու մահ, աւեր ու վայրէ:

Անոնք գիտեն որ օձերու նման
Միշտ պէտք է սողալ և լարել թակարդ.
Երազանքին մէջ հըմայել Եւան,
Տատասկի փոխել մանիշակն ու վարդ:

Գառնուկի մորթով պէտք է ըլլալ գայլ,
Սիրուիլ և յանկարծ կատաղի թափով
Սարսափ տարածել և ուժգին ոռնալ,
Անմեղ հոգիներ գահավիժել ծով:

Ըլլալ թշնամի ծաղկող սէրերուն,
Եւ ատելութեան վերածել զանոնք,
Ջըմրան ենթարկել՝ բերկրալին գարուն,
Յետոյ յաղթական՝ ծիծաղիլ անհոգ:

1932

Ու ծափ զարկին և պարեցին սիրաշեր.
Երբ դուրս ելան, միապաղաղ կանանչ էր:

Վարդեր անթիւ և կակաչներ բերազգի
Ներկընեցան արեան գոյնովը սըրտի.
Գաշտերու մէջ թերթեր կապած յասմիկի
Գեղինն եղաւ ոսկեփետուր թիթեռնիկ:

Մայրը մենակ ու սարսափած գորովէն
Դուրս ելաւ իր աղջկներուն ետեւէն.
Այն ատեն բիւր երանգներու ճաճանչով
Արեւ ծագեց տիեզերքին համօրէն:

Տեսան մարդիկ ու պաշտեցին տենչավառ
Մայր և ծընունդ, գեղեցկութիւն և հանճար.
Լերանց վըրայ կանգնեցին ուխտ ու խորան,
Ու կոչեցին զայն Անահիտ դիցամայր:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ուր խաղաղութիւն, ուր որ հանգիստ կայ՝
Փոթորիկ բերել, շրջել ամէն ինչ.
Եւ աղանեակի տեսքով հոգեհմայ
Հանել մահաշունչ ազաւի կըռիւնչ:

Յանդըգնիլ նոյն իսկ անապատին մէջ
Քաղցած Յիսուսի ճաշակել տալ քա՛ր,
Ու լերան վըրայ ծոնկիլ բերել՝ շէ՛շ,
Եւ աշտարակէն գըլորել զայն վար:

Անմեղ կոյսերու սրտէն ներս մտնել՝
Եւ ըսպաննել հոն ամէն անոյշ սէր,
Եւ օր մը՝ պոռնիկ՝ ցեխին մէջ տեսնել
Գառնօրէն լըքուած, անտուն և անտէր,

Խուցին մէջ մինակ, իր խաչին առջեւ՝
Անվերջ աղօթող քահանան փորձել.
Արարչին և հէք մարդերուն միջեւ
Անսահման ու մութ քա՛ոս ըստեղծել:

Սարսափ տարածել և քանդել անվերջ,
Ջընջել ու թաղել հաւատք, յոյս ու սէր.
Եւ յետոյ սուգուիլ, յաղթական ու պերճ,
Ծոցը դըժոխքին, և ըսպասել դեռ...

ՀՐԱՋ ՔԱՋԱՐԵԱՆ